# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

## «23» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013 Թ. N 43-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՆՈՐԱՅՐ ԲԱԼԱՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/13/1/4069-13 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-11) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Նորայր Մարտիկի Բալայանի հետ 2013 թվականի դեկտեմբերի 23-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2013 թվականի դեկտեմբերի 23-ից:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ